


ՀՀ բանկային համակարգի 2009-ի 3-րդ եռամսյակի գործունեության համառոտ վերլուծությունը

2009-ի երրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ բանկային համակարգում աճ է գրանցվել գրեթե բոլոր հիմնական ցուցանիշների գծով, բացառությամբ ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի և մաքուր շահույթի: Չնայած որոշ ցուցանիշների գծով համակարգում ցուցաբերված աճի՝ այնուամենայնիվ, պետք է արձանագրել, որ ներկայումս շարունակվում է համաշխարհային ֆինանսական ճգնաժամը և դեռևս շատ մեծ բացասական ազդեցություն է գործում բանկերի գործունեության վրա: Ասվածին վառ ապացույց է հանդիսանում հաշվետու եռամսյակում կամ ընթացիկ տարվա ինն ամիսների ընթացքում համակարգում ապահովված մաքուր շահույթի համեմատական շատ ցածր ցուցանիշը, ավելին, հաշվետու եռամսյակում ապահովված մաքուր շահույթի ցուցանիշը մոտ 0.6 մլրդ դրամով զիջել է նույնիսկ երկրորդ եռամսյակի համեմուն ցուցանիշին: Իսկ ինչ վերաբերվում է ֆիզիկական անձանց վարկերի ծավալի նվազմանը, ապա կարելի է նշել, որ ճգնաժամով պայմանավորված ֆիզ. անձանց վարկերի հատկացման հարցում բանկերը գործել են առավել զգուշավոր: Վերոնշյալի հետ մեկտեղ նաև փաստենք, որ համակարգի վեց բանկեր հաշվետու 9 ամիսները փակել են վնասով, իսկ որոշ բանկեր երկրորդ եռամսյակի համեմատ հաշվետու եռամսյակում ապահովել են մաքուր շահույթի, ինչպես նաև մյուս հիմնական ցուցանիշների գծով առավել բարձր արդյունքներ:

Այսպես, համակարգի ընդհանուր ակտիվները հաշվետու եռամսյակում աճել են 10.6 %-ով կամ 121.5 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 1266.4 մլրդ դրամ: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա 3-րդ եռամսյակի ընթացքում ընդհանուր ակտիվներն ավելացել էին 58.2 մլրդ դրամով, իսկ այս տարվա 2-րդ եռամսյակում՝ մոտ 3.4 մլրդ դրամով:

Բանկային համակարգի վարկային ներդրումները 3-րդ եռամսյակի ընթացքում աճել են 10.1 %-ով կամ 66.0 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 47.8 %-ով կամ 27.6 մլրդ դրամով և եռամսյակի վերջին կազմել համապատասխանաբար 722.4 և 85.4 մլրդ դրամ, ընդ որում՝ անցած տարվա 3-րդ եռամսյակի ընթացքում վարկային ներդրումներն աճել էին 14.0 %-ով կամ 76.6 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 0.1 %-ով կամ 57.0 մլն դրամով: Համեմատության համար կարելի է նշել, որ այս տարվա 2-րդ եռամսյակում վարկային ներդրումներն նվազել էին 2.9 %-ով կամ 19.6 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 24.5 %-ով կամ 18.8 մլրդ դրամով: 2009-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ համակարգի վարկային ներդրումները կազմել են ընդհանուր ակտիվների 57.0 %-ը, ընդ որում՝ տնտեսությանը տրված վարկերի բաժնեմասը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 63.9 %-ը կամ 461.8 մլրդ դրամ, և այս ցուցանիշը հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 23.4 %-ով կամ 87.7 մլրդ դրամով, ընդ որում՝ 2008-ի 3-րդ եռամսյակում նույնանուն ցուցանիշն աճել էր 26.9 %-ով կամ 68.1 մլրդ դրամով, միաժամանակ ավելացնենք, որ տնտեսությանը տրված վարկերը ընթացիկ տարվա 2-րդ եռամսյակում նվազել էին 23.2 մլրդ դրամով:

2009-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ
վարկերի կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի (մլրդ դրամ)




Ֆիզիկական անձանց տրված վարկերը հաշվետու եռամսյակում նվազել են 11.1 %-ով կամ մոտ 29.0 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 231.6 մլրդ դրամ, որի կառուցվածքում սպառողական վարկերը կազմել են 180.7 մլրդ դրամ կամ ընդհանուր վարկային ներդրումների 25.0 %-ը, իսկ հիփոթեքային վարկերը՝ 83.6 մլրդ դրամ կամ ընդհանուր վարկային ներդրումների 11.6 %-ը: Հաշվետու եռամսյակի ընթացքում 7.6 տոկոսային կետով նվազել է ֆիզիկական անձանց վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր վարկային ներդրումներում. այն սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 32.1 %: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում ֆիզիկական անձանց տրված վարկերի աճը կազմել էր 1.3 % կամ 3.6 մլրդ դրամ, իսկ այս տարվա երկրորդ եռամսյակում այն աճել էր 0.5 %-ով կամ 1.3 մլրդ դրամով: 2009-ի 3-րդ եռամսյակի ընթացքում սպառողական վարկերի ծավալը նվազել է 3.8 %-ով կամ 7.1 մլրդ դրամով, ընդ որում՝ հիփոթեքային վարկերի

ծավալը նվազել է 1.9 %-ով կամ 1.6 մլրդ դրամով: Տեղին է նշել, որ նախորդ տարվա 3-րդ եռամսյակում վերը նշված ցուցանիշների համապատասխան աճերը կազմել են 16.9 % կամ 32.8 մլրդ դրամ և 15.3 % կամ 11.2 մլրդ դրամ, իսկ այս տարվա 2-րդ եռամսյակում սպառողական վարկերը նվազել էին 11.4 %-ով կամ 24.1 մլրդ դրամ, իսկ հիփոթեքային վարկերը՝ 3.1-ով %-ով կամ 2.7 մլրդ դրամով:


Երրորդ եռամսյակի ընթացքում ընդհանուր ակտիվների և տնտեսության վարկավորման գծով առավելագույն աճ ապահովել է «Հայբիզնեսբանկը» համապատասխանաբար 41.9 և 27.6 մլրդ դրամ, ֆիզիկական անձանց վարկավորման գծով, այդ թվում՝ սպառողական վարկերի գծով՝ «Յունիբանկը»՝ 2.1 մլրդ դրամ և հիփոթեքային վարկերի գծով՝ «Կոնվերս բանկը»՝ 884.4 մլն դրամ:

Պետական գանձապետական պարտատոմսերում ՀՀ-ում գործող բանկերից առավելագույն ներդրումներն ունեն «ԱրմՍվիսբանկը»՝ մոտ 15.7 մլրդ դրամ և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը»՝ մոտ 9.0 մլրդ դրամ:

Համակարգում վարկային ներդրումների փոփոխման դինամիկան




ՀՀ բանկային համակարգի ակտիվները և վարկային ներդրումները 2009-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ



2009-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների ծավալը կազմել է մոտ 999.6 մլրդ դրամ, որը 3-րդ եռամսյակում աճել է 12.5 %-ով կամ 111.1 մլրդ դրամով: Հարկ է նշել, որ վերոնշյալ ցուցանիշն անցած տարվա նույն եռամսյակում աճել էր 5.6 %-ով կամ 39.9 մլրդ դրամով: Միաժամանակ ավելացնենք, որ ընթացիկ տարվա ինն ամիսների ընթացքում բանկերի ընդհանուր պարտավորություններն աճել են 25.3 %-ով կամ 201.7 մլրդ դրամով, որը պայմանավորված է նաև արտարժույթային պարտավորությունների վերագնահատման դրական արդյունքով: Ընդհանուր պարտավորությունների կազմում ֆիզիկական անձանց համախառն ավանդների (ցպահանջ և ժամկետային) երրորդ եռամսյակի աճը կազմել է 20.3 % կամ 56.2 մլրդ դրամ, իրավաբանական անձանց համախառն ավանդներինը՝ 9.8 % կամ 26.2 մլրդ դրամ և եռամսյակի վերջում համապատասխանաբար կազմել 333.3 և 294.1 մլրդ դրամ, ընդ որում՝ ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների աճը կազմել է 18.2 % կամ 37.3 մլրդ դրամ, իսկ իրավաբանական անձանց ժամկետային ավանդներինը՝ 11.3 % կամ 13.9 մլրդ դրամ: Տեղին է նշել, որ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի ընթացքում ֆիզիկական անձանց համախառն ավանդներն աճել էին 3.2 %-ով կամ 7.8 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 11.8 %-ով կամ 25.0 մլրդ դրամով, ընդ որում՝ աճ էր գրանցվել միայն ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների և իրավաբանական անձանց ցպահանջ ավանդների գծով համապատասխանաբար 7.0 %-ի կամ 11.5 մլրդ դրամի և 28.7 %-ի կամ 34.1 մլրդ դրամի: Ասվածին միայն ավելացնենք, որ ֆիզիկական անձանց համախառն ավանդներն աճել էին նաև ընթացիկ տարվա 2-րդ եռամսյակի ընթացքում. այսպես՝ ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներն աճել էին 4.7 %-ով կամ 5.5 մլրդ դրամով, իսկ ժամկետային ավանդները՝ 0.5 %-ով կամ 1.1 մլրդ դրամով: Վերոնշյալին նաև ավելացնենք, որ ներգրավված ավանդների (ֆիզիկական և իրավաբանական անձանց) ծավալը հաշվետու եռամսյակի վերջում կազմել է ընդհանուր պարտավորությունների 62.8 %-ը:

Համակարգի ցպահանջ և ժամկետային ավանդների կառուցվածքը
2009-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ (մլրդ դրամ)




- Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ
- Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ
- Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ
- Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ

Հաշվետու եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների ներգրավման գծով առավելագույն աճ ապահովել է «Յունիբանկը», որը կազմել է 13.4 մլրդ դրամ:

Իրավաբանական և ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային դեպոզիտների ծավալով առաջատար բանկը «Յունիբանկն» է՝ 66.4 մլրդ դրամով, այնուհետև նրան հաջորդում են՝ «Արդշինինվեսթբանկը»՝ 50.1 մլրդ դրամով, «ԱՄԵՐԻԱԲԱՆԿԸ»՝ 43.5 մլրդ դրամով, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը»՝ 42.2 մլրդ դրամով և «Կոմվերս Բանկը»՝ 27.2 մլրդ դրամով: Երրորդ եռամսյակում վերոնշյալ ցուցանիշի ներգրավման լավագույն արդյունք ապահովել է «Յունիբանկը», որը բացարձակ մեծությամբ կազմում է 23.6 մլրդ դրամ:

Համակարգում ցպահանջ ավանդների
փոփոխման դինամիկան


Մլրդ դրամ



■ 3-եռ. 2008թ. ■ 4-եռ. 2008թ. ■ 1-եռ. 2009թ. ■ 2-եռ. 2009թ. ■ 3-եռ. 2009թ.


Համակարգում ժամկետային ավանդների
փոփոխման դինամիկան

Մլրդ դրամ



■ 3-եռ. 2008թ. ■ 4-եռ. 2008թ. ■ 1-եռ. 2009թ. ■ 2-եռ. 2009թ. ■ 3-եռ. 2009թ.


ՀՀ բանկային համակարգի պարտավորությունները և ֆիզ. անձանց ավանդները (ցախանջ և ժամկետային) 2009-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ




ՀՀ բանկերի ընդհանուր կապիտալն 3-րդ եռամսյակի ընթացքում աճել է 4.1 %-ով կամ 10.4 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 266.8 մլրդ դրամ, որը հիմնականում ապահովվել է բանկերի կողմից կանոնադրական կապիտալի ավելացման հաշվին: Հարկ է նշել, որ ընդհանուր կապիտալը նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում ավելացել էր 9.2 %-ով կամ 18.3 մլրդ դրամով, իսկ ընթացիկ տարվա 2-րդ եռամսյակում՝ 5.1 %-ով կամ մոտ 12.6 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի բաղկացուցիչներից չբաշխված շահույթի (եկամուտների պահուստի) ցուցանիշը, հաշվետու եռամսյակի վերջում պահպանել է իր նախորդ եռամսյակի վերջում եղած մակարդակը և այն կազմել մոտ 76.0 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 28.5 %-ը: Հարկ է փաստել, որ չբաշխված շահույթը (եկամուտների պահուստը) նախորդ տարվա 3-րդ եռամսյակում աճել էր 25.5 %-ով կամ 16.0 մլրդ դրամով, իսկ այս տարվա 2-րդ եռամսյակում՝ 6.3 %-ով կամ մոտ 4.5 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի մյուս կարևոր բաղկացուցիչ մասը՝ կանոնադրական կապիտալը, հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 7.3 %-ով կամ 12.2 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 179.8 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 67.4 %-ը: Միևնույն ժամանակ արձանագրենք, որ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում կանոնադրական կապիտալը ավելացել էր 8.1 %-ով կամ 10.6 մլրդ դրամով, իսկ ընթացիկ տարվա 2-րդ եռամսյակում՝ 7.7 %-ով կամ 12.1 մլրդ դրամով:

Հաշվետու եռամսյակի ընթացքում կանոնադրական կապիտալը համալրվել է «Հայբիզնեսբանկ», «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» և «Կասկաթ Բանկ» բանկերի կողմից՝ համապատասխանաբար 5.4, 5.1 և 1.7 մլրդ դրամով:

Երրորդ եռամսյակի ընթացքում ընդհանուր կապիտալի գծով առավելագույն աճ ապահովել է «Հայբիզնեսբանկը» և այն կազմել է 5.7 մլրդ դրամ, կանոնադրի կապիտալի գծով՝ նույնպես «Հայբիզնեսբանկը»՝ մոտ 5.4 մլրդ դրամ և չբաշխված շահույթի գծով (կուտակված+մաքուր շահույթ)՝ «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկը»՝ 2.32 մլրդ դրամ:



ՀՀ բանկային համակարգի ընդհանուր կապիտալը, կանոնադրական կապիտալը և կուտակված շահույթը 2009-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ




ՀՀ բանկային համակարգում հաշվետու եռամսյակի ընթացքում ապահովվել է մոտ 2.68 մլրդ դրամ մաքուր շահույթ, որը 2008-ի 3-րդ եռամսյակում ստացված մաքուր շահույթի ծավալին զիջել է 5.17 մլրդ դրամով, իսկ այս տարվա 2-րդ եռամսյակում ապահովված շահույթի ծավալին՝ 0.57 մլրդ դրամով: Համակարգի վեց բանկեր ընթացիկ տարվա առաջին 9 ամիսները փակել են վնասով և ընդհանուր վնասը կազմել է 3.58 մլրդ դրամ: Անցած տարվա եռամսյակների համեմատ համակարգում վերոնշյալ ցուցանիշի արձանագրված ցածր մակարդակը հիմնականում պայմանավորված է դեռևս շարունակվող համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցությունով: Այնուամենայնիվ, որոշ բանկերի հաջողվել է հաշվետու եռամսյակում ապահովել մաքուր շահույթի համեմատական բարձր ցուցանիշ. այսպես՝ «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկը» և «ԵՋ-Ես-Բի-Սի Բանկ Գայաստանը» հաշվետու եռամսյակում ապահովել են մոտ 1.17 մլրդ դրամ, իսկ «ԱՄԵՐԻՎԱՆԿԸ»՝ 509.7

մլն դրամ մաքուր շահույթ: Ասվածին նաև ավելացնենք, որ հաշվետու 9 ամիսների ընթացքում համակարգի բանկերից մաքուր շահույթի առավելագույն ծավալ ապահովել են «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկը»՝ 2.73 մլրդ դրամ, «Արդշինհիմվեստբանկը»՝ 1.53 մլրդ դրամ և «ԱՄԵՐԻԱԲԱՆԿԸ»՝ 1.06 մլրդ դրամ: Միևնույն ժամանակ նշենք, որ հաշվետու եռամսյակի ընթացքում բանկերի ընդհանուր եկամուտները կազմել են 46.2 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 43.1 մլրդ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համանուն ցուցանիշները գերազանցել են համապատասխանաբար 2.2 մլրդ դրամով կամ 5.0 %-ով և 9.0 մլրդ դրամով կամ 26.6 %-ով: Իսկ համադրելով ընթացիկ տարվա 2-րդ եռամսյակում ստացված ընդհանուր եկամուտների և կատարված ընդհանուր ծախսերի հետ՝ կարելի է փաստել, որ հաշվետու եռամսյակում ապահովվել է 6.8 մլրդ դրամ ավել եկամուտ և կատարվել է ավելի շատ ծախս՝ 7.5 մլրդ դրամի: Կարելի է նաև նշել, որ հաշվետու եռամսյակում համակարգի հաշվեկշռային շահույթը կազմել է 3.1 մլրդ դրամ, որը զիջել է մոտ 6.85 մլրդ դրամով կամ 68.9 %-ով նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համանուն ցուցանիշին և 0.78 մլրդ դրամով զիջել այս տարվա 2-րդ եռամսյակի համանուն ցուցանիշը: Շարադրվածին միայն ավելացնենք, որ հաշվետու 9 ամիսների ընթացքում ստացված ընդհանուր եկամուտների և կատարված ընդհանուր ծախսերի գծով առաջատարն «Արդշինհիմվեստբանկն» է՝ համապատասխանաբար 23.84 և 21.98 մլրդ դրամ գումարներով, իսկ հաշվեկշռային շահույթի ամենամեծ ծավալն ապահովել է «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկը»՝ մոտ 3.45 մլրդ դրամ:

2009-ի առաջին 9 ամիսների արդյունքներով բանկերի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը, սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 2.98 %, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը, նույն ժամկետի դրությամբ կազմել է 0.61 %: Պետք է արձանագրել, որ տեղի է ունեցել կապիտալի եկամտաբերության, ինչպես նաև ակտիվների շահութաբերության անկում անցած տարվա նույն ժամկետի համեմատ՝ ROE-ն նվազել է 7.44 տոկոսային կետով, իսկ ROA-ն՝ 1.68 տոկոսային կետով: Վերը նշված առաջին ցուցանիշի (ROE) ամենաբարձր արդյունքն երրորդ եռամսյակի վերջում ապահովել է «Արցախբանկը»՝ 10.81 %, իսկ երկրորդ ցուցանիշինը (ROA)՝ «ԲՏԱ բանկը»՝ 3.52 %:

ՀՀ բանկային համակարգի հիմնական ցուցանիշների գծով տեղեկություններն, ըստ բանկերի, արտացոլված են աղյուսակ 1-ում:

ՀՀ բանկային համակարգի ամփոփ ցուցանիշները



2009-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ հիմնական ցուցանիշները ըստ բանկերի,
դրանց աճը երրորդ եռամսյակի ընթացքում և բանկերի գրաված տեղը համակարգում

Աղյուսակ 1.
(մլն դրամ)

Գ/Գ	Բանկերի անվանումը	Ընդհանուր ակտիվները					Ընդհանուր պարտավորությունները					Ընդհանուր կապիտալը						
		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա- կարգ	այդ թվում		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա- կարգ	այդ թվում		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա- կարգ	այդ թվում			
					Վարկ. ներդր- ումները	աճ/ նվազ (%)				Ֆիզ.անձ ժամկ. ավանդ.	աճ/ նվազ (%)				Կանոն. կապի- տալը	աճ/ նվազ (%)	Կուտ. շահույթ	Զբաշ. շահույթ I-III եռ.
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
1	ԱԿԲԱ-Կրեդ. Ազրիկոլ Բանկ	148839.9	3.9	1	86177.8	-0.4	119665.3	3.9	2	18543.2	12.8	29174.6	4.2	1	14567.2	0.0	11471.9	2729.3
2	Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Չայ.	138552.1	3.4	2	86092.6	26.6	122061.6	2.7	1	36374.2	-2.2	16490.6	9.2	5	7556.6	210.0	8605.4	1014.8
3	Արդշինհիմնվեստբանկ	122861.1	6.8	3	57577.8	-9.6	96201.2	9.2	3	30277.1	24.6	26659.9	-1.2	2	15513.6	0.0	7621.2	1528.9
4	ՎՏԲ Չայաստան Բանկ	94611.3	-4.7	6	69529.2	2.9	72031.1	-5.4	6	15637.0	17.7	22580.1	-2.5	3	13906.2	0.0	4422.8	-1520.3
5	Կոնվերս Բանկ	76402.4	-1.0	8	40303.9	-2.4	64314.3	0.2	8	13476.1	-3.5	12088.1	-7.3	8	1296.4	0.0	7971.5	-1347.5
6	Յունիբանկ	107347.4	40.8	4	56794.3	23.0	95708.5	47.5	4	50478.3	36.0	11638.9	2.8	9	8599.7	0.0	3504.6	455.0
7	Հայէկոնոմբանկ	49809.5	11.7	9	29241.8	13.1	41408.6	13.5	9	5792.0	8.5	8400.9	3.6	13	2333.3	0.0	5606.9	-75.6
8	ԱՍԵՐԻԱԲԱՆԿ	93022.2	8.0	7	45217.1	-4.6	71694.9	9.6	7	11277.5	79.7	21327.3	2.7	4	18228.4	0.0	3169.7	1064.6
9	Ինեկորբանկ	45885.9	6.8	10	28521.6	13.8	36222.2	8.0	10	8406.8	7.3	9663.7	2.7	11	2353.2	0.0	5550.7	421.7
10	Հայբիզնեսբանկ	96351.9	76.9	5	56760.8	90.4	80566.3	81.6	5	14674.8	33.8	15785.6	56.6	6	13450.0	67.1	2178.2	466.9
11	Անելիք Բանկ	44397.5	4.4	11	21320.2	-29.3	29586.1	6.9	12	6737.6	15.2	14811.4	-0.3	7	14300.0	0.0	530.0	-384.3
12	Առեկսիմբանկ	32127.7	-4.8	13	18773.7	0.6	22028.9	-7.4	14	7991.4	13.5	10098.7	1.4	10	8497.3	0.0	1346.1	151.8
13	Արցախբանկ	41173.4	8.1	12	30350.5	11.7	34804.6	8.6	11	3763.1	7.2	6368.8	5.5	17	2544.4	0.0	3239.5	675.6
14	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	29042.0	3.5	15	15894.8	34.1	21295.9	4.2	15	3451.7	-8.3	7746.1	1.7	15	6128.0	0.0	1213.9	454.3
15	Արմսպիսբանկ	31753.9	19.4	14	9636.8	2.6	25911.4	23.7	13	2396.0	30.2	5842.4	3.4	20	5001.0	0.0	621.1	162.0
16	Զարգ. Հայկական Բանկ	19248.2	15.2	19	11828.8	13.0	13244.9	24.2	16	5499.0	22.0	6003.3	-0.8	18	4556.7	0.0	1092.4	308.1
17	Պրոմեթեյ Բանկ	20433.0	-6.0	16	11223.7	32.4	10790.0	-12.2	19	1245.9	21.4	9643.0	2.2	12	7200.0	0.0	2394.1	611.0
18	Կասկադ Բանկ	19593.8	52.8	18	12279.4	60.8	12188.2	69.7	17	1339.6	30.0	7405.6	31.2	16	7248.9	31.0	-110.6	210.9
19	Բիբլոս Բանկ Չայաստան	19693.6	5.5	17	15130.2	16.5	11431.1	9.7	18	2076.8	66.2	8262.5	0.2	14	8382.2	0.0	-122.9	47.8
20	ԲՏԱ Բանկ	8656.3	-3.7	22	4791.9	-8.3	3161.3	-12.3	22	329.9	22.5	5495.0	2.1	21	6520.0	0.0	-1063.8	315.8
21	ՊրոԿրեդիտ Բանկ	14991.0	20.4	20	10337.5	20.3	9628.0	36.3	20	2047.7	17.7	5363.0	-0.3	22	6090.0	0.0	-727.0	-131.6
22	Մեյլաթ Բանկ	11614.5	2.4	21	4593.6	6.6	5658.8	8.8	21	16.0	8.1	5955.7	-3.1	19	5500.0	0.0	376.7	-118.9
	Ընդամենը	1266408.6	10.6		722378.0	10.1	999603.2	12.5		241831.7	18.2	266805.2	4.1		179773.1	7.3	68892.4	7040.3